

ՀԱՆԴԻՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԻՃԱԿ ԿԱՄ ԿՈՉՈՒՄՆ ԿԵՆԱՅ

Ընկերական վիճակն ըստ ամենայնի նման է մարդկային մարմնայ կազմութեան, յորում իւրաքանչիւր անդամ՝ իւր որոշեալ տեղին ունի, ասկից գուրս կամ բնաւ չի կրնար և կամ գէշ կերպով կը կատարէ իւր պաշտօնը՝ յոր կարգեալ է։ Ամենայն ոք մէկ վիճակի միայն կոչուած է, և անոր յատուկ պարտքերը պիտի լեցընէ։ Կրնայ հանդիպիլ՝ որ արտաքոյ կարգի գէպք մը կամ մասնաւոր առանձնաշնորհութիւն մը, ստիպէ կամ յորդորէ զմէկը այն արուեստին պարապելու՝ յոր կը կոչէ զինքը անհրաժեշտ պէտքն և կամ շահն։ Բայց այս բանս քիչ անգամ կը հանդիպի, այն ալ իբրեւ զարտուղութիւն մի։ Իսկ բարեկարգ ընկերութեանց մէջ այն վիճակն կը սահմանուի իւրաքանչիւր անհատի՝ որում յարմարութիւն կը ցուցընէ, և անոր մէջ միայն գիտէ և կրնայ ամենալաւ կերպով՝ կատարել իւր պարտքը, քան թէ Եւրիշ Ժր և Իցէ վիճակի մէջ։

Եթէ իւրաքանչիւր ոք ճանչնայ իւր ուղիւ կոչումը և անոր հետեւելով՝ ի գործ դնէ առ այն ունեցած յատուկ պարտքը, այն ատեն ընկերութիւնն ալ երջանիկ կը լինի։ Ուստի Ժողովրդեան բարքն՝ պէտք է որ այս սկզբանս համաձայնի, և ըստ այսմ առաջնորդելով մանկանց՝ դաստիարակէ զայնս։ Որպէս զի տղայք աւելի այն բաներուն մէջ կըրթուին, և զանոնք մանաւանդ լաւ սովորին՝ զորսյետոյ իրենց ապագային մէջ պիտի ստիպուին գործադրել։ Եթէ տղայք սլարտականութիւն ունին իրենց ուղիւ կոչման ի խնդիր լինելու, և առ

այն ուղիւ ըրովանդակ իրենց գործունէութիւնը և պարապմունքը, միթէ նոյնպէս պարտական չե՞ն նաև դաստիարակը՝ ընկերութեան յարաբերեալ իրաց մէջ զանոնք կրթելու։ Որպէս զի ճանչնալով անոնց հակամիտութիւնը, և քաջ կշռելով ունեցած կարողութիւննին, գիտնան վերջապէս թէ որչափ և ինչ կերպով օր մը կրնան օգտակար լինել ոչ միայն իրենց անձանց, այլ և այլոց։

Պիւթագոր խեղճ շինական մ'էր, երբ օր մը իւր տկար ուսող վրայ փայտերու խուրճ մը բարձած իւր ծերունի հօրը կը տանէր։ Դիմոկրատ մեծանուն ի մաստափրին հանդիպեցաւ։ Սա տեսնելով այն փայտերը, որոնք մեծ ճարտարութեամբ մէկտեղ կապուած էին, հարցուց տղուն՝ թէ արդեօք ինքն էր կտպած այն խուրճը։ Երբ այդ պատասխանեց տղայն, իմաստասէրն ըսաւ։ Փորձէ թէ կրնաս արդեօք քակել զայն և վերստին նոյն կերպով կապել։ Պիւթագոր շուտով հնազանդեցաւ, և նոյն արհեստով ու ճարտարութեամբ՝ կրկին անգամ կապելով փայտերը, ուսող վրայ առաւ զայն միւսանգամ։ Այս բանէս Դիմոկրատ գուշակելով տղուն ուսմանց նկատմամբ ունեցած հանճարը և բնական բերումը, զինքն իրեն ուսմանց աշակերտեց, դաստիարակեց, խնամեց, որ և իմաստասէր հանգիսացոյց հաւասար իմաստութեամբն այսպիսի վարդապետի մը։ Այսպէս պարտական են ծնողք՝ ճաննալ տղայոց յօժարութիւնը, և ըստ այնմ զանոնք դաստիարակել։

Եւ սակայն քաղաքաբնակ ընտանիք ընդհանրապէս մեծ խնամք չեն ցուցը-
նէր տղայոց բնական բերմունքը ճանչ-
նալու նկատմամբ. և ոչ իսկ սկսեալ
առաջին տարիներէն կը վարժեցընեն
զանոնք, որպէս զի այնպիսի ճամբայ
մը ընթանան, որով կարենան իրենց
յարմար վիճակ մը ընտրել. և ստուգիւ
ինչ բանի որ կերպով մը աւելի բերումն
կամ յօժարութիւն կը ցուցնեն, անոր
մէջ զանոնք դաստիարակել: Այս պատ-
ճառաւ է որ տասնութից մը կամ քսան
տարուան պատանւոյ մը երբ կը հար-
ցուի թէ ինչ վիճակի կամ կոչման տէր
կ'ուզէ լինել, ինչպէս թէ երկրքէն ի-
ջնային, — ինչ է վիճակն և ինչ կոչումն,
— կը պատասխանեն: Ասոնք են ահա
այն պատանիներն՝ որ սովորաբար ան-
օգուտ կեանք կը վարեն, անփոյթ և
ախտաւոր կը լինին. ասոնք դիպուա-
ծական պատճառներէ մղուած, այնպի-
սի գործերու ձեռք կը զարնեն՝ որոց ոչ
կոչումն ունէին և ոչ ալ պատրաստու-
թիւն. որով յետոյ անյարմար անդամք
լինելով՝ շարունակաբար կը դառնացը-
նեն թէ իրենց խեղճ ծնողքը և թէ ըն-
կերական վիճակին ալ տխրութեան ա-
ռիթ կը դառնան:

Հանգստեան համար որոշուած օրե-
րուն մէջ մանուաւնդ՝ երբ տասնութ տարուան
տարուանէ մինչև տասնևութ տարուան
տղայք, վիայականին ձեռքերնին կը
հրճուին և դատարկ կ'անցընեն ամբողջ
ամիսներ, նոր բան չէ լսել՝ որ հարք
և մարք ստէպ ստէպ կը յեղ, յեղին ի-
րենց օրըւոց՝ որ գործոյ մը ետեւէ ի-
նին. « Պէտք է, կ'ըսեն, վիճակ մը ըն-
տրէք, կամ քահանայութիւն, կամ
փաստաբանութիւն և կամ ճարտարա-
պետութիւն . . . վերջապէս՝ գործ մը
պէտք է ընել »: Որդիք՝ որք հազիւ թէ
զլիսաւոր արուեստներուն անունը լսած
են, չեն կրնար բան մը պատասխանել.
կը խոստանան ու ետ կ'առնուն ըսած-
նին զարմացմամբ. մինչև որ դարձեալ
դպրատուններն բացուին. այն ատեն
կամ ամէն միջոց կը փնտռեն՝ որ զի-
րենք դարձեալ դպրոց ուղարկեն, և

կամ միջոցներն պակսելով կը դիմին
կղերանոցի մը, դեղագործատան մը և
կամ գրագրատան մը, և ոչ զիտէ մին-
չև ուր . . . Ուր էր թէ ըսածներս սը-
խալ լինէին: Արդի դաստիարակու-
թիւնն երկու պատճառաւ անյաջող ելք
ունի. նախ՝ ուսանող պատանեաց
ներպատակ մը չը կարգելուն առթիւ. ո-
րով տղայք ուսման կը պարապին՝ ա-
ռանց անկից օգուտ մը քաղելու, և ի-
րենց այս ըրած ուսման նպատակը
չգիտնալով, և միտնդամոյն չճանչնա-
լով թէ այն է իրենց վարձանին հաս-
նելու մի միայն ճշմարիտ ուղին, մեծ
ջանքով զոյն չեն մշակեր. ուստի ուսա-
նողներէն շատերն դպրոցական ըն-
թացքը կը կատարեն՝ նման այն մար-
դուն, որ երկայն ճամբորդութիւն մը
կ'ընէ, երբեմն ծովու վրայ, երբեմն
ցամաքի, մերթ ձիով և մերթ նաւով,
բայց ստուգիւ չի գիտեր թէ ուր պիտի
հասնի, և ոչ ալ թէ ինչ վախճանաւ
պիտի հասնի: — Երկրորդ պատճառն
մասամբ մի առաջնոյն նման է, այս.
ինքն, կը պահանջեն դաստիարակք՝ որ
տղայք օրուան ամէն ժամերը զրոյց ըզ-
բաղին, ստիպելով զանոնք՝ որ հետա-
մուտ լինին քաջ ուսումնադիտաց և
հին մատենագիրներուն: Փորձուած չէ
արդեօք թէ չափահաս մը, չարունա-
կաբար երկու ժամ միայն կրնայ ուս-
ման զբաղիլ. և սակայն ընդհանրապէս
դպրոցաց մէջ հինգ վեց ժամ անդամ
միակերպ կը զբաղեցընեն զողոյս. և ան-
խոհած ծնողք՝ այսու ևս գոհ չլինելով,
հազիւ թէ տղայոց տուն դառնալը կը
տեսնեն՝ կը կշտամբեն զանոնք՝ եթէ
զրբերնին ձեռքերնէն թողուն:

Այս երկու պատճառաց հետեանքն
այս է՝ որ ամենաբոլոր տղայք յանձն
կ'առնուն այսպիսի նեղութիւն մը կրել,
և այս քիչերն ալ կամ ուսման ընթաց-
քին մէջ կ'ընկնուին և կամ տկար
և վտիտ կը մեծնան. իսկ միւսներն՝ ո-
րոնք բնական բերումն չեն զգար նե-
ղութեանց յայթելու, կամ կը յաճա-
խեն յօժարութեամբ՝ ի դպրոց, առանց
ստոյգ շահ մը ձեռք բերելու, և կամ ի-

բենց ուսումնական ընթացքին մէջ տեղը հասած՝ կ'ընդհատեն: Այս երկու դիպուածոց մէջ ալ հակառակ կը գործեն թէ իրենց ընտանեաց կամացը, որ զիրենք կ'ուզէ գրող հետ զբաղեցընել և թէ բնական իրենց առողջութեանը, որ զիրենք կ'ուզէ հետաքրքրել անոնցմէ:

Պէտք է համազօրին ծնողք թէ գրքերն միայն զտղայն մարդ չեն ըներ, և թէ ծնողք և դաստիարակք պարտք ունին՝ գրելթէ շօշափել տալ տղայոց իրենց վիճակը, յարմար փորձով առաջնորդել դէպ իրենց կոչումը, և զիրենք պատրաստել՝ հետեւելու առ այն: Ի՞նչ օգուտ ընտանեկան և դպրոցական դաստիարակութիւնէն, որչափ ալ վսեմ լինի և անխոնջ, ինչպէս կ'ըսէ նոր դարու քերթող մը:

Թէ ոչ բնածիր բերման օգտեն,
Այն իւր մըտաց թաքուն կորով,
Զոր երկինք են տըւել իրեն՝
Յայանելու ո՞ր և է կերպով:
Առ այս՝ պիտի այն զօրութիւն,
Որ Բանին հետ սիրով վառուած,
Իջաւ՝ յերկիր շինեց իւր տուն,
Բորբոքելու սիրոյ այն խայծ՝
Որ թըշուառին օգնէ, ոյժ տայ,
Քաշած զըրկանքը մոռանայ:

Պատանեկութիւնն բնական ազգամայր, և կամ ըսել ներքին եռանդեամբ մը՝ որ զինքն սնհանգիստ կ'ընէ, կը մըլուի չափազանց բարձր մտածութեանց, դիտաւորութեանց և որտալոյ կարգի ակնկալութեանց. որով կը տեսնուի յայտնի թէ ինչպէս մարդկային կոչումն կը դիմէ առ յաւիտենականութիւն՝ իրրէ առ իւր վերջին նպատակ: Բայց փորձառական կենաց մէջ այս ձկաւումն ճշմարտէն և պատշաճէն անդին կ'անցնի, և զբովանդակ հոգին կը զբաղեցընէ՝ փափաքել տալով այնպիսի իրաց, որոնք օտար կրնան լինել իւր վիճակին և պարտուց: Տղայք միշտ պիտի ուզեն զօրավար և ոչ երբեք զինուոր լինել, ճարտարապետ և ոչ երբեք հիւ-

սըն, բժիշկ և ոչ բնաւ անասնաբոյժ:

Բայց շատ տնդամնաւ հարք և դաստիարակք զիրենք այնպէս մտածելու և փափաքելու կը յորդորեն, և տղայոց կը ցուցընեն միայն այն հռչակաւոր մարդիկ, որոնք զարմանալիք եղան աշխարհիս, և զայնս օրինակ կու տան առնոց: Նոյնպէս դպրոցաց մէջ ալ միշտ այս յորդորը կու տան տղայոց, թէ «նախանձաւոր և հետամուտ եղէք առնոց, քանի որ յայտնի չ'երևի թէ դուք բարոյական կատարելութեան մէջ» քան զտնոյք ևս յառաջագէժ կը գտնուիք, և անոնցմէ աւելի ջանքով և յարատեւութեամբ նոյն կատարելութեան կը դիմէք: Բայց ո՞վ է արդեօք այն պատանին՝ զոր դուք կը յորդորէք այսպիսի բարձրութեան հասնելու: Արդեօք ինքն ալ այդ մեծանուն մարդկանց պայմաններուն մէջն է, զորս իրեն առջև կը դնէք. իր վիճակն ալ այդ մարդկանց, այդ վարդապետութեանց և այդ իրաց համաձայն է, զորս կը գովէք. միթէ իր հոգին ստացաւ ՚ի բնութեանէ այն կորովը, ոյժը և այն մեծանձնութիւնը, որ զինքը ուղղին իր մտածութեանց, իր ըզգից և գործոց մեծամեծ փորձերուն մէջ, իսկ եթէ չունի նա այս ամէն յատկութիւններէն և ոչ մին, ինչո՞ւ համար իրեն կ'արտեան պատճառ լինել, զբաղեցընելով զինքը պատիր յոյսերով: Ընչ պատճառաւ հեռացընել զինքը իւր կոչմանէն՝ զոր սահմանած է նախախնամութիւնն, և զոր կը յայտնեն իրեն ոչ միայն իւր ներքին բերմանը, այլ և այն ամէն պարագաներն՝ որոնք կը մղեն զինքը ուրիշ վիճակի մը: Այս պատճառաւ, որ մարդկանց մեծագոյնն մասննոր, ազմկալից և անյայտ կենաց ետեւէ կը լինին, կը ձանձրանան ներկայէն, և ազատիլ կ'ուզեն անկէ. իրենց փափաքելի կ'երևի և աւելի երջանիկ՝ իրենց վիճակէն դուրս ուրիշ որ և իյց վիճակ, միայն թէ չունենայ այն կանոններն, այն ներկայ անտեսական և քաղաքական կենաց կարգերն, զորս կը գտնեն իրենց վիճակին մէջ:

Այս պատրանաց ենթակայ կը լինին մանաւանդ այն ընտանիքներն՝ որոնք հանդիստ ապրելու դիւրութեան մէջ կը գտնուին, և որոնց այսպէս կ'երևի թէ որդիքնին միշտ պէտք է հեռու կենան արուեստական զբաղմունքներէ, և անանին միայն գիտութեանց և ուսմանց վսեմ և նուրբ դադափարներով: Այն որդիքն՝ որ այս յուսով կը դաստիարակուին, կը մեծնան՝ առանց ուղիղ դադափար մ'ունենալու տընտեսական և ընկերական բարեխառնութեանց վրայ, բոլորովին զուրկ կը մնան 'ի խնամակալութենէ, և իրենց հայրենական ունեցած ժառանգութիւննին լաւ մատակարարելու գիտութենէն: Եւ ոչ իսկ կ'անդրադառնան՝ թէ մինչդեռ իրենք բանաստեղծութեամբ և կամ հետաքրքրական վէպերով զրազած են, խեղճ վիճակի մէջ կը մնան անդաստանք՝ գէշ մշակութեան պատճառաւ, տուրեստն կ'իյնայ՝ բարոյական և դրամական պակասութեան առթիւ: Բայց թէ իրուցընէ ընկերական դաստիարակութիւն ընդունած լինէին, 'ի վաճառ պիտի դնէին իրենց հարըստութեան գէթ մի մասն, և չարժամ պիտի տային վաճառականութեան և նաւարկութեան, առանց ետ մնալու ուրիշ ազգաց յառաջագիմութենէն: Միթէ տարօրինակ բան մ'է՞ գտնել ուսումնաստեն և գիտուն երիտասարդներ՝ որոնք ձեռքերնին պնդացուցած լինին Հոլանտայի և կամ Գաղղիայի նաւու մը մէջ 'ի պորձ գրած աշխատութիւններով: Միթէ դժուար է գրունել Գերմանիոյ և կամ Գաղղիոյ մէջ Լորտերու և կամ Պսիւռններու զաւակունք: Որք հազած լինին մեքենադործի և կամ ձուլադործի աշխատատեղաց տարազը:

Այս սխալ ըմբռմունքը ամէն ժամանակէ աւելի՝ տարածուած է Հիմայն, նաև աշխատատեղաց յետնազոյն դասակարգութեան մէջ: Եւ մենք ամենօրեայ փորձով կը տեսնենք՝ որ մշակն, ծառան և կոշկակարն իսկ՝ կը փափաքին և կը շնան իրենց որդիքը օրէնսդիտական,

քնարտնական և իմաստասիրական դասառութեանց ուղարկել, և այս պատճառաւ յանձն կ'առնուն ամէն տեսակ նուիրմունք, երկայն հակադրութիւնք և տաժանակիր նեղութիւնք: Մինչև կ'աղքատանայ բոլորովին խեղճ ընտանիքն, եւ զուր տեղ իրենց կ'ըսուի թէ տղուն հանճարն չափաւոր է, հաստատուն կամք և յարատեւութիւն չունի. դարձնալ 'ի զուր է ըսել, թէ տղուն անձնական զօրութիւնն կը տկարանայ՝ երբ բռնի կը զրկէք զայն մշակութենէ, և կամ արհեստէն հանելով՝ անօգուտ տեղը ուսման կու տաք, դատարկ կեանք անցընելու վարժեցընելով: Այս կերպով՝ անփոյթ կեանք մը կը վարէ, և թէ իւր ընտանեաց սովորութիւններէն օտարանալով՝ բնաւ մէկ մ'ալ չի դառնար իր ծնողաց, եթէ ոչ 'ի նեղութենէ ականջ ստիպեալ և ստամբակ կենքը: Վերջապէս ունայն բան է ազդառնել ծնողաց թէ տղայք միանգամ որ հեռանան իրենց բնական վիճակէն, այն եղբայրական հաւասարութենէն, և մոնաւանդ ընտանեկան ներքին խաղաղութենէն՝ յորում միայն կը կա, յանդիմարանութիւնն, յաջողակութիւնն և երջանկութիւնն՝ եթէ բարեկազմ է ընտանիքն, կը ստիպուին այն ատեն ախտաւոր և չար ընկերաց հետ չըլլի, իրենց բարբը շատով խանգարել: Որով պիտի տառապեցընեն իրենց ընտանիքը և իրենք զիրենք ալ ամենաթշուառ, վշտալից և ապերժանիկ կենաց մէջ պիտի ձգեն. և թերևս անխժան են իսկ զանոնք՝ որ բռնի այն ուղիղ ճամբէն զիրենք խտորեցուցին, որ գործունեայ և անմեղ կենաց հանդարտութեանը մէջ՝ իրենց առջև բացուեր էր: Ահաւասիկ այս ամենայն ինչ 'ի զուր են. վասն զի երբ ծնողք կ'ամբաստանուին այսպիսի անդէպ ընթացից համար, աւելի ևս կարծես կը յամառին իրենց կարծեացը մէջ, Բայց այսու մենք չենք ուզեր ըսել թէ ընդհանուր մարդկանց կոչումն իրենց բնական վիճակն է, և թէ գերազանց հանճարներ և մեծամեծ պարագաներ

միայն՝ քիչ անգամ կրնան դողայն աւելի ազնուական կենաց ճամբու մը մէջ դնել:

Ուստի կամաւ ոտիպելով զողայս՝ որ պարզ հոյեցողական կենաց պարապին, և զանապան դիպաց մէջ՝ անոնց բնկերական վիճակի վերաբերեալ արուեստի մը նկատմամբ ունեցած բնական բերումը չմիակերպ, և փոյթ չղքներով ոչ անոնց ժամանակին և ոչ ալ յարմար պարագայից, օր ըստ օրէ երթալով՝ անհաւատալի կերպով կը բաղմանայ դժբախտաբար այնպիսեաց թիւն, համեմատութեամբ մը՝ որով հինգ միլիոն բնակչաց մէջ՝ երեսունէն մինչև քառասուն հազար ապուշ աղաք կը համրուին. որոնցմէ մաս մը ախտաւոր են, մաս մ'ալ սրճարաններու մէջ զուարճութեանց և խաղերու զբաղած են. կը գտնուին և այլք ողբ խռովութեան և քաղաքական անկարգութեանց փափաքող են. որով յիշուի կը ստուգուի խաղական քերդութեան ճանդէի այս խօսքս, թէ

Բարտն և բնութիւն երբ իրարու դէմ ելնեն. Ինչպէս ամէն սերմ՝ դուրս ցանուած իր երկրէն, Միշտ քախողակ արգիւնք յառաջ կը բերեն:

Ծնողաց և դաստիարակաց կրթութեան այս մասին մէջ ունեցած պակասութիւնը լեցընելու գիրք մը՝ յիշուի ազգերնուս մէջ գեռ չէ լոյս տեսած. և մեր պատանիքն իրաւամբ կրնան իրենց առաջնորդներէն այնպիսի օգտակար գործիքի մը ստացման յոյս ունենալ, թերես նաև պահանջել իսկ վասն զի պարտք են առաջնորդաց աւանդել անոնց իւրաքանչիւրին՝ ոչ թէ միայն ընդհանուր տեսութիւններ, այլ և յատուկ և մերձաւոր ծանօթութիւն մը իւրաքանչիւր վիճակի կենաց, ամէն մէկուն բնական բերման և ձրից համեմատ. Ուստի մենք առ այժմ գէթ Բաղմամիպիս էջերուն մէջ կը ջանանք այս զգալի պտկասը լեցընելու համար ստէպ ստէպ օգտակար յօդուածներ հրատարակել:

* * *

ԿԵՆ ԱՅ ԵՒ ՄԱՀՈՒ ԽՆԴԻՐ

ՅԱՏԵՆԻ ՕՐԻՆԱՅ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Ուսկից արդեօք ընդունած է իւր ծագումն օրինաւոր իշխանութիւնն, և կենաց և մահու խնդիրն որչափ հին է ժամանակաւ. — Ինչ սկզբան վրայ հիմնուած է. — Ինչ է անոր զխաւոր նպատակն և մինչև ցերե կրնայ և պիտի տեսէ: Ահաւասիկ հարցեր՝ որոց կը պատասխանենք՝ թէ գերադոյն և օրինաւոր իշխանութեան մի և ի դրական օրինաց կը ծագի այն, և այնքան հին է ժամանակաւ՝ որքան հին է մարդկային ընկերոջիւնն երկրիս վրայ, և գուցէ անոր հետ և անոր չափ ևս տեսէ:

Եթէ դառնանք մտքով յանցեալ անդր մարդկութեան, եթէ կարդանք

անոր պատմութիւնն և յիշատակարանը, անբացասելի կերպով կը տեսնենք թէ ազգը և ազինք ամենայն քաղաքակրթեալ և բարբարոս ժողովուրդներ, ամենայն միապետական, հասարակապետական, ազնուապետական և ռամկապետական վարչութիւնք առ հասարակ և քաղաքք և գերդաստանք՝ օրինողրած և ի կիր արկած են զայն յօդուտ ընդհանուր ընկերութեան և առանձին անհատից:

Այժմ թողունք յանուն պատուհասի կենաց և մահու դատապարտելոց վրայ եղած ծայրայեղ չափազանցութիւնք՝ անցեալ ժամանակաց մէջ, որոնք այս